Ո Ր Ո Շ Ու Մ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.02.2022թ. *ք.Երևան*

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ, Դավթաշեն և Արաբկիր վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ Աղվան Եղիազարյանս ուսումնասիրելով 22.10.2021թ. հարուցված թիվ **08214923 և** և **08215061** ֆորմալ կատարողական վարույթները*

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

*Թիվ **08215078 և 08215084 կատարողական վարույթների շրջանակում** ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.10.2021թ. տրված թիվ ԵԴ/18957/17/21 կատարոքրղական թերթի համաձայն պետք է Լևոն Ֆարմանյանից և ԹԻ և ԼԻ ՍՊ ընկերությունից համապարտության կարգով հօգուտ «Գառնի Ինվեստ »ՈՒՎԿ ՓԲ ընկերության բռնագանձել **2.719.032** ՀՀ դրամ և կատարողական թերթով հաշվարկվող տոկոսներ բռնագանձումը տարածելով 21.05.2018թ-ին կնքված թիվ ՇՄԳ099-18 պայամանգրով գրավադրված շրջանառության մեջ գտնվող ապրանքների վրա:*

*Թիվ **08215046 և 08214995 կատարողկան վարութի շրջանակում** ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.10.2021թ. տրված թիվ ԵԴ/18960/17/21 կատարոքրղական թերթի համաձայն պետք է Լևոն Ֆարմանյանից և ԹԻ և ԼԻ ՍՊ ընկերությունից համապարտության կարգով հօգուտ «Գառնի Ինվեստ »ՈՒՎԿ ՓԲ ընկերության բռնագանձել **1.659.933** ՀՀ դրամ և կատարողական թերթով հաշվարկվող տոկոսներ բռնագանձումը տարածելով 21.05.2018թ-ին կնքված թիվ ՇՄԳ099-18 պայամանգրով գրավադրված շրջանառության մեջ գտնվող ապրանքների վրա:*

Պարտապանից բռնագանձել նաև բառնագանձման ենթակա գումարի հինգ տոկոսը, որպես օրենքով սահմանված կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական վարույթներով բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ Հարկադիր ակատարումն ապահովող ծառայությունում պարտապան Լևոն Ֆարմանյանի և ԹԻ և ԼԻ ՍՊ ընկերություն վերաբերյալ հարուցված բոլոր կատարողական վարույթով պահանջատերերի պահանջի ամբողջական կատարումը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

***Կասեցնել 22.10.2021թ. հարուցված թիվ 08214923 և և 08215061. ֆորմալ կատարողական վարույթը 90 օրյա ժամկետով**:*

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90 օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Digitally signed by YEGHIAZARYAN AGHVAN 2709960338
Date: 2022.02.24 15:10:25 AMT

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում

հարկադիր կատարող,
Արդարադատության լեյտենանտ ***Ա.Եղիազարյան***